ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«22» 10 2025թ.
No 012699

«ԱԼԵՔՍ 33» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԳՈՌ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
(հասցե՝ Վաղարշապատ, Մանուշյան փ., 4/4
էլ. հասցե՝ emul.misakyan@bk.ru)

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2025 թվականի հոկտեմբերի 21-ի ««Ալեքս 33» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 713-Ա որոշմամբ (այսուհետ՝ **թիվ 713-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-05278/25 վարույթը (այսուհետ՝ **Վարույթ**):

«Ալեքս 33» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ **Ընկերություն**) լսված լինելու իրավունքն իրացնելու նպատակով Ընկերությունը կարող է երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել գրավոր դիրքորոշում և այն հիմնավորող նյութեր հարուցված վարույթում քննարկվող հարցերի վերաբերյալ: Ընկերության հիմնավոր միջնորդության հիման վրա երկշաբաթյա ժամկետը Հանձնաժողովի նախագահի գրությամբ կարող է երկարաձգվել մինչև երկշաբաթյա ժամկետով: Ընդ որում, նման միջնորդություն կարող է ներկայացվել վարույթ հարուցելու մասին որոշումը ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետի ընթացքում:

Տեղեկացնում ենք, որ.

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը կազմվում են, և ամբողջ գործավարությունն իրականացվում է հայերենով:

3. Ընկերությունը թիվ 713-Ա որոշումը ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում, իսկ Հանձնաժողովի նախագահի գրությամբ դիրքորոշում ներկայացնելու ժամկետը երկարաձգված լինելու դեպքում նաև այդ ժամկետում Ընկերությանը վերագրվող իրավախախտման փաստն ընդունելու և իրավախախտման հետևանքները վերացրած լինելու պայմաններում, իսկ իրավախախտման հետևանքները վերացնելու անհնարինության դեպքում միայն իրավախախտման փաստի ընդունմամբ կարող է արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացնել Հանձնաժողով: Ընդ որում, արագացված վարույթի կիրառման արդյունքում պատասխանատվության միջոց կիրառելիս պատասխանատվության միջոցը չի կարող գերազանցել տվյալ իրավախախտման համար նախատեսված ամենախիստ պատասխանատվության միջոցի մեկ երկրորդը:

4. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Ընդ որում, նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

5. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Կողմն իրավունք չունի ներկայացնելու այնպիսի ապացույցներ, որոնք չեն ներկայացվել վարչական վարույթի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմը չի ներկայացնում բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական վարույթի ընթացքում ներկայացնելու հնարավորությունից: Միաժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2.1-րդ մասը սահմանում է, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշելիս վիճարկող կողմի՝ իր համար բարենպաստ հետևանքներ առաջացնող ապացույցների՝ վարչական վարույթի ընթացքում չտրամադրման հետևանքով առաջացած ոչ բարենպաստ հետևանքների ապացուցման բեռը չի կարող դրվել վարչական մարմնի վրա:

6. «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ **Օրենք**) 93-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ վարույթով պատասխանող տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի, ոչ ամբողջական, ապակողմնորոշիչ տեղեկություններ ներկայացվելու կամ սեփական նախաձեռնությամբ Հանձնաժողով ոչ հավաստի, կեղծ, ապակողմնորոշիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև վարույթով քննարկվող իրավախախտման համար սահմանված տուգանքի չափը, իսկ մի քանի խախտումների դեպքում՝ դրանց համար սահմանված առավել խիստ տուգանքի չափը:

7. Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորությունը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

8. Պատասխանատվության միջոցի ընտրությունը և տուգանքի հաշվարկումն իրականացվում է Հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 22-ի թիվ 566-Ն որոշմամբ սահմանված մեթոդաբանությամբ **(**այսուհետ նաև՝ **Մեթոդաբանություն)**: Ընդ որում, Մեթոդաբանության 47-րդ կետի համաձայն՝ պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների առկայության ապացուցման բեռը կրում է վարույթով պատասխանողը:

9. ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածով վարչական վարույթով ապացույց կամ բացատրություն կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու կամ կեղծ ապացույց ներկայացնելու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

10. ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով վարչական վարույթով սուտ բացատրություն կամ սուտ ցուցմունք տալու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

11. Ընկերության կողմից Վարույթի հարուցումից հետո դրա շրջանակում քննարկվող վարքագծի կրկնությունը հիմք է նոր վարույթ հարուցելու համար:

12. **Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև**

առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Կից ուղարկվում է թիվ 713-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ «6» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ

Սպառողների շահերի պաշտպանության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (214)

www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 21 նոյեմբերի 2025 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 713-Ա

«ԱԼԵՔՍ 33» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2025 թվականի հոկտեմբերի 21-ի նիստում, քննարկելով «Ալեքս 33» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) կողմից սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը (այսուհետ նաև՝ **Տեսչական մարմին**) 2025 թվականի սեպտեմբերի 9-ի գրությամբ հայտնել է, որ քաղաքացիներից պարբերաբար ստացվում են բողոքներ Ընկերության կողմից շահագործվող բենզալցակայաններում և հեղուկացված ածխաջրածնային գազի լցակայաններում չափագիտական կանոնների և նորմերի խախտումների վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերը նշված բողոքները՝ Տեսչական մարմինն իրականացրել է ստուգումներ՝ հայտնաբերելով թերլիցքավորման դեպքեր, մասնավորապես՝ 2025 թվականի սեպտեմբեր ամսին ՀՀ Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Երևանյան խճուղի 16-17, 9/3 հասցեում գործող բենզալցակայանում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերվել է չափագիտական նորմի էական շեղում՝ ըստ բաշխիչ աշտարակի ցուցմունքի՝ 10,0լ չափանոթը լիցքավորելիս փաստացի չափանոթը լիցքավորվել է 9,06լ, շեղումը կազմել է 0,94լ:

Ելնելով վերոգրյալից և նպատակ ունենալով սպառողներին պաշտպանել վերը նշված ոլորտում առկա հնարավոր ռիսկերից՝ Տեսչական մարմինը Հանձնաժողովին խնդրել է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխարգելիչ միջոցառումներ:

Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1102 գրությամբ Հանձնաժողովը դիմել է Տեսչական մարմնին՝ խնդրելով տրամադրել Ընկերության մոտ իրականացված ստուգմանն առնչվող բոլոր փաստաթղթերի պատճենները:

Տեսչական մարմինը 2025 թվականի հոկտեմբերի 10-ի գրությամբ տրամադրել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 6-ի թիվ 730-Ն որոշմամբ հաստատված՝ «Ավտոմոբիլային և ավիացիոն բենզինի, դիզելային և նավթային վառելիքի, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքի և մազութի ստուգման վերաբերյալ» ստուգաթերթի 1-ից 4-րդ և 18-րդ կետերի և «Չափումների միասնականության ապահովման ստուգման վերաբերյալ» ստուգաթերթի 1-ին և 2-րդ կետերի (այսուհետ միասին՝ **Ստուգաթերթեր**) համաձայն իրականացված ստուգումներին առնչվող բոլոր փաստաթղթերի պատճենները, մասնավորապես՝ ի թիվս այլնի, Տեսչական մարմնի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 19-ի ««Ալեքս 33» ՍՊԸ-ում տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների պահպանման և չափումների միասնականության ապահովման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու մասին» N 699-Ա հրամանի, ինչպես նաև Տեսչական մարմնի 2025 թվականի հոկտեմբերի 7-ի «Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների պահպանման և չափումների միասնականության ապահովման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու մասին» N 699-Ա ստուգման ակտի (այսուհետ նաև՝ **Ստուգման ակտ**) պատճենները:

Ստուգման ակտի համաձայն՝ Ընկերությունը զբաղվում է վառելանյութի մանրածախ վաճառքով ք. Վաղարշապատ, Երևանյան խճուղի 16-17, 9/3 հասցեում:

Ընկերությունում ստուգումն իրականացվել է Ստուգաթերթերի հիման վրա: Ստուգման արդյունքում հայտնաբերվել է նավթամթերքի բաշխիչ աշտարակի էլեկտրոնային հանգույցի ցուցանիշի շեղում՝ ԱԻ-95 Կ5 նավթամթերքի բաշխիչ աշտարակի արտացոլած ցուցանիշը կազմել է 10,0լ, աշխատանքային չափանմուշի (ստուգաչափված չափման համար նախատեսված ծավալային տարայի) արտացոլած ցուցանիշը կազմել է 9,06լ: Փաստացի շեղումը կազմել է 0,94լ, որից թույլատրելին կազմում է 0,05լ:

Ընկերությունը գործունեության ընթացքում չի ունեցել չափագիտության բնագավառում իր մոտ իրականացված նախորդ ստուգումների ժամկետների արդյունքների մասին տեղեկատվություն պարունակող QR (արագ արձագանքման) կոդ:

Տեսչական մարմնի ղեկավարի կողմից չեն արձակվել չափման միջոցների շահագործումն արգելելու և բացահայտված խախտումների և թերությունների վերացման մասին կարգադրագրեր, քանի որ ԱԻ-95 Կ5 նավթամթերքի բաշխիչ աշտարակը ստուգաչափվել է 2025 թվականի սեպտեմբերի 18-ին, և չափագիտության բնագավառում իրականացված նախորդ ստուգումների ժամկետների արդյունքների մասին տեղեկատվություն պարունակող QR (արագ արձագանքման) կոդը տեղադրվել է լիցքավորման բաշխիչ աշտարակի վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովի սպառողների շահերի պաշտպանության վարչությունը 2025 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ ՄՊՀ-012385 զեկուցագրով առաջարկել է Ընկերության կողմից անարդար առևտրային գործելակերպի դրսևորմամբ սպառողների շահերը խախտող գործելակերպի հատկանիշների

առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ՝ հայտնելով, որ ավտոմոբիլային բենզինի թերլիցքավորմամբ վաճառք իրականացնելու Ընկերության վարքագիծն առերևույթ պարունակում է անարդար առևտրային գործելակերպի դրսևորմամբ սպառողների շահերը խախտող գործելակերպի հատկանիշներ:

«Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 26.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սպառողների շահերը խախտող գործելակերպ են համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած վարքագիծ, գործողություն կամ անգործություն, որոնք ազդում են կամ կարող են ազդել անորոշ շրջանակով սպառողների կամ սպառողների խմբի շահերի վրա և հակասում են սույն օրենքին, այլ օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի կամ գործարար շրջանառության սովորույթներին կամ խախտում են սպառողների նկատմամբ բարեխղճության, ազնվության, արդարության, ճշմարտության կամ անաչառության սկզբունքները:

Օրենքի 26.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սպառողների շահերը խախտող գործելակերպն արգելվում է:

Օրենքի 26.1-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սպառողների շահերը խախտող գործելակերպ են համարվում սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող ցանկացած վարքագիծ, գործողություն կամ անգործություն, այդ թվում՝

1) «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքով նախատեսված անարդար առևտրային գործելակերպը.

2) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդը.

3) սպառողների հետ կնքվող միանալու պայմանագրերին կամ պայմանագրի ընդհանուր պայմաններին ներկայացվող պահանջների խախտումը.

4) ապրանքի որակին, քանակին և այլ բնութագրերին ներկայացվող պահանջների խախտումը.

5) «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ ապրանքի գնի ներկայացման կանոնների խախտումը:

Օրենքի 26.1-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սպառողների շահերը խախտող գործելակերպի հատկանիշների առկայության հարցը գնահատում է Հանձնաժողովը:

Օրենքի 26.1-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված հասկացությունները կիրառվում են «Գովազդի մասին» օրենքի իմաստով:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է վարքագիծը սպառողների շահերը խախտող գործելակերպ որակելու երկու եղանակ. մի դեպքում սպառողների շահերը խախտող գործելակերպի դեպքերն են Օրենքի 26.1-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված առանձին դրսևորումները, մյուս դեպքում՝ Օրենքի 26.1-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշները պարունակող վարքագիծը, գործողությունը կամ անգործությունը, եթե այն.

- ազդում է կամ կարող է ազդել անորոշ շրջանակով սպառողների կամ սպառողների խմբի շահերի վրա,

- հակասում է սույն օրենքին, այլ օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի կամ գործարար շրջանառության սովորույթներին, կամ խախտում է սպառողների նկատմամբ բարեխղճության, ազնվության, արդարության, ճշմարտության կամ անաչառության սկզբունքները:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ սպառողների շահերը խախտող գործելակերպի առանձին դրսևորումները հետևյալն են.

1. անարդար առևտրային գործելակերպը, որը սահմանված է «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքով,

2. օրենքին հակասող, ներառյալ՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդը,

3. սպառողների հետ կնքվող միանալու պայմանագրերի կամ դրանց ընդհանուր պայմանների խախտումը,

4. ապրանքի որակի, քանակի և այլ բնութագրերի վերաբերյալ պահանջների չպահպանումը,

5. «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի պահանջների խախտումը, որը վերաբերում է ապրանքի գնի ներկայացման կանոններին:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի 37.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առևտրային գործելակերպը համարվում է անարդար, եթե այն հակասում է բարեխղճության, ազնվության, արդարության, ճշմարտության կամ անաչառության սկզբունքներին և ունի կամ կարող է ունենալ ազդեցություն այն միջին սպառողի՝ ապրանքի (աշխատանքի, ծառայության) նկատմամբ դրսևորած վարքագծի վրա, որին ուղղված է այդ գործելակերպը, կամ խմբի միջին սպառողի վարքագծի վրա, երբ առևտրային գործելակերպն ուղղված է սպառողների կոնկրետ խմբի:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի 37.1-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անարդար առևտրային գործելակերպ են սույն օրենքի 37.2-րդ և 37.3-րդ հոդվածներով նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողություն, անգործություն կամ վարքագիծ:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի 37.1-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սպառողի նկատմամբ տնտեսավարող սուբյեկտի անարդար առևտրային գործելակերպն արգելվում է:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի 37.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործողությունը համարվում է մոլորեցնող, եթե այն պարունակում է ցանկացած կեղծ, ոչ հավաստի, աղավաղված տեղեկատվություն, կամ տեղեկատվությունը ներկայացվում է այն ձևով, որ թեև այն փաստացի ճիշտ է, սակայն կարող է թյուր տպավորություն ստեղծել տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքի (աշխատանքի, ծառայության), դրա գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի (աշխատանքի, ծառայության) աշխարհագրական ծագման կամ արտադրության կամ իրացման գործընթացի, որոշակի

նպատակի համար դրա պիտանիության, դրա ժամկետի, որակի, քանակի կամ այլ բնութագրերի, առաջարկման կամ մատուցման պայմանների կամ գնի կամ դրա հաշվարկման եղանակի կամ սպառողի իրավունքների վերաբերյալ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել միջին սպառողին և դրդում է կամ կարող է դրդել սպառողին կայացնելու գործարքի վերաբերյալ այնպիսի որոշում, որն այլ պարագայում չէր կայացնի:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի 37.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անգործությունը համարվում է մոլորեցնող, եթե տնտեսավարող սուբյեկտը ոչ պարզ, ոչ հստակ, ոչ լիարժեք կամ անորոշ ձևով կամ ոչ ճիշտ ժամանակին տրամադրում կամ չի տրամադրում իր, իր գործունեության կամ առաջարկած ապրանքի (աշխատանքի, ծառայության), դրա գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի (աշխատանքի, ծառայության) աշխարհագրական ծագման կամ արտադրության կամ իրացման գործընթացի, որոշակի նպատակի համար դրանց պիտանիության, որակի, քանակի կամ այլ բնութագրերի, առաջարկման կամ մատուցման պայմանների կամ գնի կամ դրա հաշվարկման եղանակի կամ սպառողի իրավունքների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն, որն անհրաժեշտ է սպառողին գործարքի վերաբերյալ որոշում կայացնելու համար և դրդում է կամ կարող է դրդել սպառողին կայացնելու գործարքի վերաբերյալ այնպիսի որոշում, որն այլ պարագայում չէր կայացնի:

«Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենսդրական չափագիտության ենթակա ոլորտներում կիրառվող չափման միջոցները պետք է համապատասխանեն օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Նման պայմաններում թերլիցքավորմամբ ավտոմոբիլային բենզինի վաճառք իրականացնելու Ընկերության վարքագիծն առերևույթ կարող է պարունակել անարդար առևտրային գործելակերպի դրսևորմամբ սպառողների շահերը խախտող գործելակերպի հատկանիշներ:

Օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում և սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտումների համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7.1-րդ մասի համաձայն՝ սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտման համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը՝ պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությամբ սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Ընկերության կողմից սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 91.1-րդ հոդվածի 1-ին մասով, 76-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 91.4-րդ հոդվածի 1-ին մասով, 83-րդ հոդվածի 1-ին մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ալեքս 33» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀԻՆ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ **Տ. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

2025 թ. հոկտեմբերի 21
Երևան